

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐԲԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԱՆ

«Մուրճ»-ի անցեալ ամսաւ համարում մի թերթն ակնարկ գցեցինք ալդ Ընկերութեան մինչ ակժմ ունեցած գործունէութեան վերալ և հաստատեցինք որ նա, ալդ Ընկերութիւնը, չափազանց փոքր գործունէութիւն է ցոյց տւած, քանի որ, տասը տարւալ ընթացքում, նա հաղիւ կարողացել է հրատարակել միջին թւով տարեկան մի հատ հասարակ մեծութեան գիրք, ալսինքն՝ տարեկան մի գիրք, մեծութեամբ մօտաւորապէս հաւասար «Մուրճ»-ի մի ամսալ համարի:

Անկասկած, դա շատ լղար գործունէութիւն է:

Այժմ, երբ տեղական գրական դասակարգը ամենալն լրջութեամբ սկսել է մտածել ալդ Ընկերութեան մասին և իւր ձեռքն է առել սորան, վէճ է բացւել հրատարակելի գրքերի որպիսութեան մասին:

Կարծիքների ալդ տարաձայնութիւնը երևան եկաւ ապրիլի 2-ին և 16-ին կապացրած ընդհանուր ժողովների մէջ և ալդ հակառակ կամ իբր թէ հակառակ տենդենցիաները փոխադրւեցին լրագրական չօղւածների մէջ: Դորանով սկսւեց մի փոքրիկ պալքար երկու խմբերի մէջ, որոնցից մէկը ձեցոյց տւեց, իբր թէ հակական հին ընտիր գրքերի արտատպելը և տարածելը նա գերադասում է ժամանակակից ընթերցանութեան պահանջներից. մինչդեռ միւս խումբը բացառիկ կերպով պաշտպանում էր ալ ուղղութիւն՝ ալն է, թէ մեղ հարկաւոր չեն հակական կլստիկները, որոնք ժողովրդին անհասկանալի են, ալ հարկաւոր են ժողովրդին հասկանալի և ժամանակակից պահանջներին համապատասխանող գրքեր:

Խնդիրը ալսպիսով դառաւ ակադեմիական և վարդապետական, որով մի լաւ ապացոյց տրւեց, թէ ինչպէս հասարակ խնդիրները պարզ դատողութեամբ վճռել չը գիտենք, որովհետև դեռ ևս վարժ չենք ժողովներում հասարակ դատողութեան տօնը պահպանելու, մանաւանդ եթէ կուսակցական վրէժխնդրութեան ղգացումը մէջն է խառնւում:

Առողջ դատողութիւնը ալդ դէպքում տեղիք տւեց դօքտրինականութեան, որը բոլորովին անտեղի էր, և ալսօր, որպէս երէկ, Ընկերութեան

ապագայ գործունէութեան մասին, համարձակ կարող ենք ասել, ոչ մի խնդիր չը պարզւեց, գործելու ոչ մի պլան չը մշակւեց: Նոքա, որոնք իբր թէ պաշտպան էին սոսկ կլասիկականութեան, ընդունում են ժամանակակից ընթերցանութեան շահանջների իրաւացիութիւնը. իսկ նոքա, որոնք վերջիններիս պաշտպանն էին—չը հերքեցին հալ կլասիկների օդաւանդութիւնը: Եթէ մէկը աւելի տաք կերպով պաշտպանում էր կլասիկներին, ալի միմիայն նորանից էր, որ հակառակորդը ձև էր ցոյց տալիս, իբր բոլորովին հերքում է հակական կլասիկների որևէ նշանակութիւնը: Եւ ընդհակառակը, եթէ մի կողմը ջատագովում էր նոր ժողովրդական գրականութիւնը, ալի նորանից է, որ հակառակ կողմը ձև էր ցոյց տալիս, թէ արհամարհում է ժողովրդական գրականութիւնը: Մի խօսքով ալն դիրքը, որ բռնել էին և շարունակում են բռնել երկու կողմնրը—մեզ թւում է կեղծ: Եւ իբր հետևանք ալի կեղծ դիրքի՝ լրագրական լօղածները, գրած ալի առիթով, մեզ թւում են գրական սրախաղութիւններ, նոյնքան հետաքրքրական մեզ համար, որքան հասարակութեան և մանաւանդ Ընկերութեան ծառաելու կոչած մարդկանց համար: Ալի սրախաղութիւնները ձանձրալի են:

Եղած ընտրութիւնները թէ վարչութեան և թէ խմբագրական մասնաժողովի համար ապացուցանում են, որ դասական գրականութեան և ժամանակակից ժողովրդական գրականութեան նկատմամբ հակառակութեան նշույն անգամ լինելու չէ: Առ ալթմ նոր ընտրածների մասին ասեալը միայն լատնի է, որ հակառակ հին վարչականների և խմբագրականների, նոքա աւելի ձեռնհասութիւն և եռանդ ունին տպագրական գործի համար. ալնպէս որ, եթէ հները քիչ գործեցին, նորերը գործելու են երևի աւելի շատ: Բայց ալի դանաղանութիւնը միայն քանակական է և ոչ որակական:

Ալն վիճաբանութիւնները, որոնց ակնարկում ենք, անյան մեծ մասամբ անպտուղ միմիայն ալն պատճառով, որ լատնած կարծիքները չէին բղիտում Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութեան գոչութեան պալմանների և մասնաւոր նպատակների ուսումնասիրութիւնից: Եղած վիճաբանութիւններից պարզւեց արդեօք, թէ ինչով կարող է դանաղանել հասարակական ընկերութիւնը մի մասնաւոր անձից, երբ երկուսն էլ հրատարակիչներ են: Ո՛չ: չը պարզւեց: Եթէ չը պարզւեց, ասալ ինչպէս կարող էր լատնած կարծիքներից բղխել գործունէութեան մի որևէ պլան, ինչպէս կարող էր որոշել Ընկերութեան համար մի որևէ նպատակ: Զէր կարող: Բատնած կարծիքների մէջ կալին նաև ճիշդ մտքեր, բայց ալի մտքերը մի որևէ սխտեմական մտածողութեան արդիւնք չէին, նոքա իրար հետ չէին կապում մի ընդհանուր թելով: Սրինակ, ոյ կարող է հերքել, թէ քանի մեր գրականութիւնը անքան աղքատ է ժողովրդին և երևիսաներին թէ դնալ և թէ բովանդակութեամբ ու լեզուով մատչելի

գրքերով—պէտք է որ Ընկերութիւնը աշխատէ աղղկիսի գրքեր հրատարակելու: Այդ ճշմարիտ է, բայց ով կարող է հերքել և ասն, որ մի գիրք, որպիսին է օրինակի համար Սահակ քահանայ Սահակեանցինը, որը կրօնադիտութեան, ուրեմն մի դպրոցական առարկայի դասաւանդութեան համար նոր ճանապարհ է բանում, բոլորովին արժանի է մի հասարակական ընկերութեան ուշադրութեան և բոլորովին արժանի է, որ աղղկիսի մի գիրք հրատարակելու համար մինչև անգամ Ընկերութիւնը ղոհաբերութիւն անի: Միթէ վարդելի չէ ասն տեսակէտը, որին չարում են շատերը, մանաւանդ հին վարչութեան անդամներին, թէ էժան, ժողովրդին մատչելի, ուրեմն և հեշտ գնող գրքեր կարող են հրատարակել շատերը, ասեպէս որ միմիայն այդ Ընկերութիւնն է, որը պարտական է գրքեր հրատարակել, որոնք իրանց բովանդակութեամբ բոլորովին արժանի են հրատարակելու, բայց որոնք նիւթական օգուտ չեն խոստանում: Անկարելի է չը խոստովանել, որ այդ տեսակէտը նմանապէս շատ վարդելի է:

Բայց չէ որ, եթէ վերջին տեսակէտը ընդունի իբր ուղեցուց, Ընկերութիւնը չի կարող մեծ քանակութեամբ ժողովրդական գրքեր հրատարակել. և, ընդհակառակը, եթէ առաջին տեսակէտը անլի վարդի, երկրորդ տեսակի գրքերը և նոցա հեղինակները պէտք է ղոհին:

Մինչ ակժմ եղած վիճաբանութիւնները ոչ մի կերպ չը կարողացան հաշտեցնել այդ երկու խնդրն ըստ ինքեան իրաւացի, արդար և վարդելի պահանջները: Եւ ինչո՞ւ: Որովհետեւ չափոնած կարծիքների հիմքը չէ կազմում Ընկերութեան գոյութեան և առանձնապատկութիւնների, ուրեմն և առանձին նպատակների ուսումնասիրութիւնը:

Չափոնած կարծիքների մէջ կան լաւ մտքեր, բայց չը կալ դատողութիւն:

Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութիւնը, չը մոլորւելու համար Ընկերութեան թէ նպատակի և թէ գործելու եղանակի նկատմամբ, պէտք է մի քանի հանգամանքներ ի նկատի ունենալ: Այդ հանգամանքների տեսութիւնից Ընկերութեան գործելու եղանակը և նպատակները ինքն ըստ ինքեան կ'որոշւին:

Առաջին հանգամանքը: Ինչո՞վ կարող է Ընկերութիւնը ընակաշար բար հարստանալ, աւելցնել իւր միջոցները՝ աւելի ու աւելի շատ գրքեր հրատարակելու համար:

Պատասխան.— Գլխաւորապէս իւր տպագրած գրքերից ստացած օգուտներով: Անդամակցական վճարները կարող են կազմել 100—500—1000 ռուբլի, բայց ոչ շատ աւելի: Գոնէ ոչ ոք չի կարող շատի վերալ չոյս ունենալ: Այս օրւայ օրս նա ունի մինչ 100 անդամ, ուրեմն մինչ 600

րուբլու անդամակցական վճար, եթէ ամեն տարի աղքատ անդամներ հաշան, կը նշանակէ թէ անդամները վճարներով կարելի է տպագրել մի հատ հասարակ մեծութեան գիրք, հաշուելով նաև հեղինակի կամ թարգմանչի համար մի թեթև վարձատրութիւն:

Այդ մեծ բան չէ: Ուրեմն, եթէ անդամներ հարկաւոր են Ընկերութեան համար, նրանց վերաջ չէ, որ Ընկերութիւնը կարող է լոյս դնել իւր նիւթական միջոցները մեծացնելու համար:

Կտակները և նւէրները վերաջ նմանապէս չը պէտք է լոյս դնել: Եթէ լինին էլ կտակներ, կտակարարները կը տան Ընկերութեանը օգուտը համար միմիայն կտակած կամ առհասարակ նւիրած գումարների տոկոսները: Քսան հազար րուբլու տոկոսները հազիւ կարող են տարեկան, ապահով կերպով, 1000 րուբլի գումար տալ Ընկերութեան ձեռքը, աւելեւ՝ տարեկան մի հատ լաւ մեծ, պատկերազարդ գիրք:

Փոքրիկ բան, որպէս տեսնում էք. բայց այդ քիչ վերաջ էլ լոյս կարելի է դնել միայն 10—20 տարում: Եւ վերջապէս դա արտաքին մի հանգամանքի գործ է: Ընկերութիւնը չի կարող ձեռքերը խաչել ու սպասել, մինչև որ կտակներ լինին իւր օգտին:

Մեռում է միայն մի հաստատ և մշտական աղբիւր: Այդ՝ գրքերից ստացած օգուտներն են:—Միակ աղբիւրը, որի հիման վերաջ կարող է Ընկերութիւնը ապահով կերպով լոյսեր դնել և գործել:

Գորանից մենք խելոյն կարող ենք մի եղբայրացութիւն անել. և այդ եղբայրացութիւնը սա է, որ՝ եթէ Ընկերութիւնը ձգտում է մեծ քանակութեամբ գրքեր հրատարակելու, նա հարկադրւած պէտք է իւր միջոցները առատացնէ, տպագրելով և վաճառելով հեշտութեամբ ծախուող գրքեր:

Որպէս տեսնում էք, ալստեղ ուղղութեան խնդիր չը կա: Հեշտ ծախուող, շուտ սպառուող գրքեր նոքա են, որոնց կարելի է մի որոշ ժամանակում հասարակութիւնը ամենից շատ է զգում: Այդպիսի գրքեր կարող են պատկանել գրականութեան որ տեսակին էլ որ ուղէք: Մի որոշ ժամանակում, մի ալդպիսի գիրք կարող է Խորենացու պատմութիւնը լինել, եթէ եղած օրինակները սպառւած են և ուսումնարանները պահանջում են ալդ գիրքը: Մի ալդպիսի գիրք կարող է մի լաւ և ընդունւած դասագիրք լինել. մի ալդպիսի գիրք կարող է մի վիպասանի չաջողած վէպ լինել, նա կարող է և «Հաղար ու մի գիշերները» լինել, որպէս նաև մի լաւ կազմած ուսանելի-հալիւն բառարան, բայց ոչ երբէք, օրինակ, Կանտի «Չուտ բանականութեան քննադատութիւնը» և Տէր-Աղէքսանդրեանցի «Թիֆլիզեցւոյ մտաւոր կեանքը», որոնց մասին առաջուց կարելի է գուշակել, որ չեն ծախուի: Բայց ինչ ասել կ'ուղէ, որ ալն, ինչ պահանջում է մեր մատնանիշ արած առաջին հանգամանքը, մեծ մասը երեխայական և պատանեկական գրքերն են, որովհետև ալդ հասակն է, որ ամենից շատ ընթեր-

ցանութեան գրքեր է պահանջում. նոցանով են լիքը մեր բոլոր ծխական և թեմական դպրոցները, որոնց աշակերտների համար նպատակադրմար գրքեր քիչ կան մեղանում:

Ի՞նչ անուն տանք ալն գրքերին, որոնց հրատարակութեան պահանջողը ալդ առաջին հանգամանքն է: Ընդհանուր խօսքով, նոցա կարելի է անանել՝ հեշտ վաճառող գրքեր և ոչ անպատճառ ժողովրդական գրքեր, որովհետև շատ գրքեր կան բուն ժողովրդի համար նշանակած, որոնք չեն վաճառում և, ընդհակառակն, կան գրքեր, որոնք հեշտ են վաճառում, առանց հասարակ ժողովրդի համար նշանակած լինելու: Օրինակներ աւելորդ են:

Արդ, ալն պահանջը թէ տպագրեն հեշտ վաճառելու գրքեր՝ վաճառականական պահանջ է: Լաւ թէ վատ է հնչում ականջին, ալդ մի և նոյնն է: Ընկերութեան միջոցների աճումը կարելի է միայն, երբ լարվենք ալդ վաճառականական տեսակէտը:

Երկրորդ հանգամանք՝ Գրքեր, հեշտ վաճառելու գրքեր հրատարակելու համար անհրաժեշտ չէ հասարակական ընկերութեան կազմակերպութիւն: Մենք, ըստ մեզ, անդրդելի կերպով ապացուցեցինք, թէ Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութիւնը ուղէ չ'ուղէ՝ հարկադրած է հեշտ վաճառելի գրքեր հրատարակել, ալլապէս նորա գոյութիւնը երբման մէջ կը լինի, որպէս էր ցափմ. բայց եթէ ալդ ճիշդ է, եթէ Ընկերութիւնը պէտք է հեշտ վաճառելի գրքեր հրատարակէ, ուրեմն ինչ զանազանութիւն կալ Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութեան և մի մասնաւոր հրատարակիչ անձի կամ մասնաւոր անձերից կազմած հրատարակչական ընկերութեան մէջ:

Եթէ մեզ կ'ասեն, թէ հասարակական. ընկերութիւնը աւելի մեծ գումարներ կարող է ձեռք բերել, քան մասնաւոր մի անձ և կամ մասնաւոր ընկերութիւն՝ իբր դորան պատասխան կը փնջենք վերը փշած առաջին հանգամանքը, ալն է, որ Ընկերութեան մշտական և գլխաւոր հարստութիւնը պէտք է գոյանալ գրքերից ստացած օգուտներից: Եթէ գործը ինքն ըստ ինքեան շահաւէտ է, մասնաւոր մարդիկ ձեռնամուխ կը լինին հրատարակչական գործին, որպէս ալ Էլ արդէն մի քանիսը կան: Եթէ շահաւէտ չէ, Թիֆլիսի Ընկերութիւնն էլ չի կարող իսկ ունենալ կանոնաւոր կերպով հարստանալու. բայց ալն ժամանակ նորա գոյութիւնը չի կարող շատ հետաքրքրական լինել, որովհետև ստիպւած պէտք է անգործ մնալ: Մնում է ենթադրել, թէ գործը շահաւէտ կարող է լինել: Արդ, եթէ գործը շահաւէտ է, որպէս ալ Էլ կան, վաղը, միւս օրը մասնաւոր անձեր կը սկսեն հրատարակչական գործը նոյն եղանակով, ինչպէս պահանջում է վաճառականական տեսակէտը, սկսելով գործը շափաւոր գումարով, օրինակի համար՝ մի կամ երկու հազար բուլլով, հէնց խաչ գումարով, ուրեմն, ինչ որ այսօր ունի Թիֆլիսի Հրատարակչական Ընկերու-

թիւնը, Օրէնքը չի արդելում մասնաւոր անձերին կամ ընկերութիւններին գրքեր հրատարակել առանձին առանձին վերնագիրներով և կը սկսեն հրատարակել, որը՝ առաւելապէս մանկական գրքովներ, որը՝ առաւելապէս պատանեկական, որը՝ միմիայն բոմաններ, որը՝ միմիայն հեշտ ընթերցանելի ճանապարհորդութիւններ, որը՝ միայն դասադրքեր և ասլն, և ասլն, էլ չենք ասում, որ սէրը դէպի մասնա գիտութիւնը և դէպի ժողովուրդը անշուշտ կը թելադրէ մի բնագէտի՝ հրատարակել մատչելի գրքեր ընագիրութիւնից, մի բժշկի՝ դիւրամբունելի գրքեր առողջապահական և մանկատաժական գիտութիւններից և ասլն, և ասլն:

Մի հասարակ թւաբանական հաշիւ կարող է ցոյց տալ, որ եթէ մէկը սկսի հրատարակչական գործը 1000 թուրքիով, հրատարակէ գրքեր վաճառականական տեսակէտից և շատանալ 20% զուտ արդիւնքով, որպէս անում է Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութիւնը, և հրատարակած գրքերը ալքան էժան լինին, որ հեշտութեամբ ծախի 1200 օրինակը մի տարում—հաշիւով անգամ 20% կորուստ, ալէ հրատարակիչը 10 տարում իւր հրատարակչական ուժը 7—8 անգամ կ'աւելացնի: Ալէ նոյն է թէ ալէ մասնաւոր անձը կամ ընկերութիւնը առաջին տարին հրատարակէ 10 գրքով 20 կոպէկանոց, իսկ տասներորդ տարում նոյն սկզբնական գումարով և նորա վերադիր տեկոսներով հրատարակէ 70—80՝ 20 կոպէկանոց գրքովներ կամ 40 դիրք՝ 40 կոպէկանոց և 15՝ մի-մի թուրքիանոց գրքեր:

Մեր աղքատիկ գրականութեան համար ալէ կը լինէր արդէն մի մեծ բարերարութիւն, եթէ մէկը ալքան ծառայութիւն անէր. ուր կը մնալ եթէ ալգլիսիները տասը—քսան լինէին:

Ուրեմն, եթէ Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութիւնը, իւր միջոցները աճեցնելու կողմից, ոչ մի առաւելութիւն չ'ունի մի մասնաւոր հրատարակչից, որպէս $2+2=4$ ապացուցած ենք համարում, որ հեշտ վաճառելի գրքեր հրատարակելու համար հասարակական ընկերութեան կազմակերպութիւնը, որպիսին է Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութիւնը, անհրաժեշտութիւն չէ:

Մենք մինչև անգամ ասելի էլ հեռու ենք գնում և պնդում ենք, որ մի մասնաւոր ընկերութիւն, կազմած 2—3—4 ձեռնհաս և գործը սիրող անձերից, կապած իրար հետ համերաշխ թէ բարոյական և թէ նիւթական շահերով, ալէ տեսակ գրքեր հրատարակելու գործում, շատ ասելի մեծ լաջողութիւն կ'ունենալ, քան Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութիւնը իւր բոլոր բարդ կազմութեամբ: Նւ վերջապէս մենք չը գիտենք, թէ ալխարհքիս ո՞ր կէտում գոյութիւն ունի մերի նման մի ընկերութիւն, որի նպատակը լինէր առհասարակ գրքեր հրատարակել և որի քաղղը լանձնած լինէր 6 թուրքի վճարելու կամք ունեցող բոլորովին պատահական անձերի ձախառնութիւնից: Մի ալգլիսի ընկերութեան անուն

մենք լսած չենք. բայց եթէ նա գտնուիւն էլ ունի որ և իցէ տեղ, մենք համարձակ կ'ասենք, որ նշանաւոր զեր չէ խաղում. Եւրոպայում թէ ալժմ և թէ դեռ այն ժամանակներում, երբ ընթերցանութիւնը ալժման չափերով տարածւած չէր, հրատարակչական գործի չաջողութիւնը, ժողովրդի ձեռքը հազարներով և տասնեակ հազարներով գրքեր տուղները եղած են ոչ թէ Թիֆլիսի Ընկերութեան նման ընկերութիւններ, այլ մասնաւոր մարդիկ և մասնաւոր ընկերութիւններ. Վերցրէք Փրանսիական «Bibliothèque nationale», որը հրատարակում է 25 սանտիմանոց, ուրեմն շուրջ 10 կոպէկանոց գրքեր, և նա կարողացել է ամենալեւին խոսիւթները ներմուծել Փրանսիական և օտար, բայց Փրանսերէն լեզուով՝ հին թէ նոր կլասիկների գրածները. Վերցրէք. օրինակ, «Bibliothèque utile», որը հրատարակում է 60 սանտիմանոց ուրեմն 20—25 կոպէկանոց գրքեր, որոնք ընդհանրացնում են գիտութեան ամեն ճիւղի՝ և՛ պատմութեան և՛ փիլիսոփայութեան և՛ աշխարհագրութեան և այլ գիտութիւնների վերաբերեալ նոր գրած գրքեր. Առէք, օրինակ, գերմաներէն «Universal-Bibliothek», որը հրատարակում է մեծ մասամբ 20 պֆենիգանոց (8—10 կոպ.) գրքեր՝ թէ նոր գրած և թէ հին գլխաւորապէս զուտ գրական բնաւորութեան գրքեր. Եւ այն հրաշալի անգլիական հրատարակութիւնները «Բնագիտական տարրական գրքեր» անունով, գրած անկասկած առաջնակարգ գիտնականների ձեռքով, որպէս բնագէտ Հիւբսլէյ, քիմիկոս Ռօսկօ, ֆիզիկոս Բալֆուր Ստիւարտ, աստղագէտ Նօրման Լօկալը, երկրաբան Գալիլի, ֆիզիոլոգ Ֆօստեր, գերմանացի կենդանաբան Օսկար Շմիդտ, բուսագէտ դը Բարի, հանքաբան Պետերս և ալլն. Դոքա հրատարակութիւններ են, գրած ամենամատչելի լեզուով և նկարներով, բայց որոնց մէջ կը գտնէք բնական գիտութիւնների ծուծը և որոնք, իրանց մատչելի գներով (30—40 կոպ.), ամեն մի հասարակ գրպանի տիրոջ բաժին են դառած.

Եւ դեռ քանի քանի ուրիշ հրատարակութիւններ կան թէ մեզ չալտնի և թէ անչալտ, որոնք ընթերցանութիւնը ամբողջի համար հաց ու կերակուր են դարձրել:

Եւ ինչ, Միթէ դոքա հասարակական ընկերութիւններ են Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութեան նման. Ո՛չ երբէք:

Եւ վերջապէս մեր հալկական հրատարակչական փորձն իսկ ապացուցանում է մեր ասածը. Վերցրէք, օրինակ, պ. Գրիգոր Շահումյանցիին: Օրերումս նա հրատարակել է իւր տասներորդ թարգմանական գործը. Պ. Փիլիպպոս Վարդանեանցը չարունակ տպագրում է իւր թարգմանութիւնները. Պ. Յովհաննէս Նազարեանցը իւր գրքերի հրատարակութեամբ ոչ մի ընկերութեան չէ պարտական. Եւ դեռ դոքա հրատարակիչներ չեն. Ահա ձեզ կենտրոնական և կովկասեան գրավաճառանոցները, որոնք տպագրել են գրքեր տասնեակներով և ուլ գիտէ թէ քանի տասնեակ հազար օրինակներով. Եւ դեռ ինչ գործունէութիւն ցուց կը տան մասնաւոր մարջ

դիկ, եթէ նոքա, միակ, թէ ընկերակցութեամբ գործին հմուտ և ընդունակ անձերի, նպատակ դնեն գրքեր հրատարակել, մոցնելով գործի մէջ ևս ևս։

Բայց արդէն բաւական է։ Մենք կրկնում ենք, որ հեշտ վաճառելի գրքեր հրատարակելու համար անհրաժեշտ է հասարակական ընկերութեան կազմակերպութիւն։

Երբ որդի հանգամանք։ Մի կողմից մենք ապացուցեցինք, որ ընկերութիւնը հարկադրւած պէտք է հեշտ վաճառելի գրքեր հրատարակէ, իսկ միւս կողմից մենք ապացուցած ենք համարում, որ ալդ գործունէութեան ասպարիզում Թիֆլիսի Հրատարակչական ընկերութիւնը ամենաշատը հաւասար է մի մասնաւոր անձի կամ մասնաւոր ընկերութեան, թէ ներկայ, թէ ապագայ հրատարակչներին։ Գորանից պարզ եղբակացութիւնը այս պիտի լինէր, որ ալդ ընկերութիւնը, եթէ օգտաւէտ կարող է լինել, որպէս օգտաւէտ է ամեն մի հրատարակչի, ահա ամենալին մի ալդպիսի հաստատութիւն է, որի վերաջ հարկաւոր լինէր դարձնել ընդհանուր ուշադրութիւնը և որի համար հարկաւոր լինէր լուղել մտքեր և լուղել ներքուստ։

Բայց իսկապէս ալդպէս է։ Մի հանգամանք կա, որ զանազանում է Թիֆլիսի Հրատարակչական ընկերութիւնը բոլոր մասնաւոր հրատարակչներին։ Դա՛ հրատարակութիւնն է ալդպիսի գրքերի, որոնց բարձր նշանակութիւնը չի չափում գնողների քանակութեամբ։ Այս արդարև, մասնաւոր հրատարակչների գիտատրութիւնների մէջ չի կարող մտնել զոհաբերութիւնը՝ լանուն գիտութեան կամ ժողովրդի բարձր շահերի։ Կան աշխատութիւններ, որոնք նոր ուղղութիւն են տալիս գրականութեան, գիտութեան կամ որպէս հիմք են ծառայում գրականութեան մի ճիւղի, չը նպատ, որ ալդ տեսակ գրքերը բնականապէս պէտք է քիչ գնողներ գտնեն։

Դժար բան է մի անգամից որոշել բոլոր ալդ գրքերը, որոնք ալդ կատեգորիային են պատկանում, մասնաւոր մեր կեանքի նկատմամբ։ Մեղանում ալն բոլոր աշխատութիւնները, որոնք միմիայն ժողովածուներ են և պարունակում են հում նիւթեր, աշխատութիւններ, ուրեմն, որոնք պահանջում են ժողովողից երկար տարիների աշխատանք,—ծախելու գրքեր չեն։ Ժողովեցէք հալկական աւանդութիւնները մեծ քանակութեամբ և հրատարակեցէք նոցա մի ճոխ հատորով—առնողներ շատ քիչ կը գտնէք, չը նպատ որ ալդպիսի մի ժողովածու նիւթ է տալու շատ կարգի գրողներին, պատճառ է դառնալու գրականութեան ծաղիկուն։ Ուրիշները օգուտ կը քաղեն ալդ ժողովածուից և կը գրեն շատ գրքեր, որոնք կը տարածեն և կը կրթեն մանուկին էլ, չափահասին էլ. բայց նոցա մալր-աղբիւրը կը գտնէք միալն գրքերի սիրահար մի քանի անձերի մօտ և մի քանի գրադարաններում։ Այս ալդ որ մասնաւոր հրատարակչը լանձն կ'առնի մի ալդպիսի գիրք հրատարակելու։ Սովորաբար մի ալդպիսի գիրք

հրատարակելու համար մեղանում դիմում են բաժանորդագրութեան: Բայց ամեն ժողովող Ալիշանն է, որ բաժանորդագրութիւն չաջողեցնէ և ամեն Ալիշան՝ Մխիթարեան Ուխտի նման հարուստ ընկերութեանն է պատկանում: Թիֆլիսի ընկերութեան հրատարակած գրքերից պ. Տէր-Աղէքսանդրեանի «Թիֆլիսեցւոյ մտաւոր կեանքը» պատկանում է ալդ տեսակ գրքերի կատեգորիային:

Մենք կարող ենք օրինակները շատ բազմացնել, բայց մեր այս գրութեան նպատակը է ցուցակներ պատրաստել ոչ հեշտ ծախսող ու ոչ դժուար ծախսող գրքերի: Բաւական է, որ մեր միտքը չպտնած լինինք, Ընդհանուր կերպով կարելի է ասել, որ դժուար ծախսող գրքերը նոքա են, որոնք աւելի գիտութեան են ծառայում, քան ժողովրդական ընթերցանութեան: Գիտութեան ծառայող գրքեր հրատարակողները Ռուսիայում և Եւրոպայում լինում են նաև գիտնական ընկերութիւնները, որ մեղանում ոչ կան և ոչ էլ լոյս կարելի է ունենալ, որ նոքա մօտ ապագայում լինին: Այդ գիտնական ընկերութիւնները ֆօնդեր ունին իրանց մասնագիտութեան վերաբերեալ աշխատութիւններ հրատարակելու համար, ոչ թէ շահ, օգուտ ստանալու, այլ միմիայն իրանց գիտնական նպատակներին ծառայած լինելու համար:

Մեր նպատակի համար աղբյւրի գրքերին կարող ենք տալ դժուար ծախսող գրքերի անուն: Մենք կարող ենք հաւատացնել, որ եթէ Եւրոպայում գոյութիւն ունենալին միմիայն մասնաւոր հրատարակիչներ կամ հրատարակչական, բայց վաճառականական ընկերութիւններ, ալժմեան Եւրոպան ալն լուսաւորեալ Եւրոպան էր լինի: Չը պէտք է կարծել, որ Եւրոպայում ամեն գիրք ծախսում է ցանկալի քանակութեամբ և լրբ թէ վատերը հէնց նրանք են, որ չեն ծախում:

Արդ, մեղանում մի որ և իցէ հաստատութիւն պէտք է բռնէ վիշաժ ընկերութիւնների տեղը, թէ ոչ: Եթէ Եւրոպայում մի դժուար ծախելու գիրք ուրախութեամբ կարող է չանձն առնել հրատարակելու մի որ և է հասարակական գիտնական կամ լոկ գրական ընկերութիւն, պէտք է թէ ոչ, որ մեղանում գոյութիւն ունենալ մի հաստատութիւն, որը ղոհաբերութիւն չանձն առնէր գրքեր հրատարակելու գործում:

Մօտաւորապէս մի աղբյւրի նպատակի ծառայում են մեղանում Մխիթարեան Ուխտը և հանդուցեալ Իզմիրեանի ֆօնդը: Բայց առաջինը սահմանափակած է և մատչելի է ամեն հային, իսկ երկրորդը՝ շատ փոքրիկ է և հազիւ բաւական է մի հեղինակի՝ տարէնը 5—600 թուրքով վարձատրելու: Եթէ աղբյւրի ֆօնդեր լինէին մէկի փոխարէն վստն կամ հարիւր—ալդ ֆօնդերի տւած օգուտը կը լինէր իսկապէս զգալի հայկական գրականութեան համար: Բայց քանի որ ալդ չը կա և լոյս էլ չը կա, թէ շուտով լինի, մեր միակ լոյսը մնում է Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութիւնը: Այս թույլին միմիայն ալդ Ընկերութիւնն է մեղանում, որի սկզբ-

բուհքները չեն հակառակում հակավաճառականական ուղղութեան՝ հրատարակական գործում, Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութիւնը, եթէ ուղում է իւր գոյութիւնը պատկառելի և միանգամայն անհրաժեշտ դարձնել հաւ հասարակութեան առջև, պէտք է իւր ծրագրի մէջ մտցնի աւելի բարձր շահերին ծառայող գրքերի հրատարակութիւնը, չը հրաժարելով օգուտից, եթէ սա լինի, բայց օգուտը պալման չ'ընդունելով իւր գործունէութեան համար:

Այդ տեսակ գրքեր հրատարակելով՝ նա կը տարբերւի բոլոր մասնաւոր հրատարակիչներից:

Հասարակական ընկերութեան կազմակերպութիւնը, որը անհրաժեշտ չէ գրքեր հրատարակելու համար առհասարակ, մեր հանգամանքների մէջ, անհրաժեշտ է դառնում հրատարակելու համար անպիսի գրքեր, որոնց հրատարակումից վաճառականը չա՛հ չի ունենալ:

Ծրագրի: Մինչ ակում մեր ասածները պարունակում են իրանց մէջ բոլորը, ինչ հարկաւոր է Թիֆլիսի Հրատարակչական Ընկերութեան գործունէութեան ծրագրի մշակելու համար:

Գոյութիւնը ապահովելու համար, նա հարկադրած պէտք է հեշտ վաճառելի գրքեր հրատարակէ:

Իւր կազմակերպութիւնը արդարացնելու համար, նա պէտք է նպատակ դնէ հրատարակել գրքեր, որոնց օգտակարութիւնը և անհրաժեշտութիւնը ընդունելով հանդերձ, չեն խոստանում զրամական օգուտ և ծառայէ իբր խրախուս աշխատաւոր և օգտակար հեղինակներին, որոնք առանց Ընկերութեան օգնութեան կամ կը կորչեն կամ կը հարստահարեն:

Վերջին նպատակին ծառայել կարողանալու համար, Ընկերութիւնը պէտք է ունենալ մեծ միջոցներ: Նա գոնէ պէտք է մի քանի հազար ռուբլու դոհաբերութիւն անելու ուժն ունենալ, առանց դորանով խախտելու Ընկերութեան գոյութիւնը:

Ո՞րտեղից պէտք է կազմել անքան դոհաբերութիւն անելու համար տարեկան եկամուտ:

Պատասխան.— Հեշտ վաճառելի գրքերի հրատարակումից:

Այս ընդէին Ընկերութիւնը ունի զրամագլխով 3000 ռ., եկամուտով՝ 1500 ռ.: Անձեռնմխելի գումար Ընկերութիւնը չը պէտք է ունենալ. անմիտ բան է անձեռնմխելի դարձնել մի գումար, որը շատ աւելի մեծ շահ կը բերէ հեշտ վաճառող գրքեր հրատարակելով:

Մենք ընդունում ենք ուրեմն, որ զրամագլխով, անդամակցական վճարներով և արդէն տպագրած գրքերի ներկա տարաւ սպասելի արդիւնքով՝ Ընկերութիւնը կ'ունենալ հրատարակչական միջոցներ 4000 ռուբլուց աւելի: Թող լինի հէնց ակդքան և թող նա հեշտ վաճառելի գրքեր հրատարակէ արդ գումարով և ստանալ տարեկան զուտ արդիւնք 20%: Հին վարչութեան անդամները, Կանձին Նախկին Նախագահ պ. Յովհաննիսեանի, անպիսի օգուտը Կատենցին իբր սովորական և միանգամայն սպա-

սելի: Եւ դեռ արդ նոքա են ընդունում, որոնք սովոր էին դժար ծախող գրքերի հաշիւներին: Քանի որ մեր ծրագրով գործը պէտք է սկսւի և շարունակւի գլխաւորապէս հնչող ծախող գրքերով, տարեկան դուռն արդիւնքը մենք իրաւունք ունինք հասցնելու 25%: Զը պէտք է մոռանալ, որ շատ գրքեր կարող են վաճառուի 6 ամսում, 8 ամսում, մանաւանդ շատ էժան և ընթերցանելի գրքովները: Ուրեմն տարաւ ընթացքում նոցա վերաւ մտած գումարները երկրորդ շրջանառութեան մէջ են մտնելու:

Ինքներդ հաշուեցէք, թէ որքան ճիշդ է, որ արդէս գործելով, արտարաւ 4000 թուրքի 6 տարում միմիայն շահ կ'ունենաւ մօտ 4000 թուրքի, իսկ ընդամենը մօտ 20.000 թուրքի շրջանառութեան մէջ, իսկ տասը տարում նա կ'ունենալ անելի քան 50.000 թուրքի հրատարակչական շրջանառութեան մէջ:

Մեզ հարկ չը կալ սպասել, որ Ընկերութիւնը հասնի արդ ուժին, որ նոր-նոր սկսի զոհաբերութիւնը: Թող մի երկու տարուց լետ հա լանձն առնի զոհաբերութիւն միայն 500 թուրքու, 4 տարուց լետ—1000 թուրքու, 6 տարուց լետ՝ 1500, 10 տարուց լետ՝ 2000 թուրքու և ալն: Այդ եղանակով մենք, ի հարկէ, 10 տարում չենք հասցնի Ընկերութիւնը 50.000 թուրքու կարողութեան, ալ կը հասցենք գուցէ միայն 20—25.000-ի: Բա և ինչ հարկ կալ Ընկերութեան համար տպագրել ամեն տարի 30—40—50 հազար թուրքու գիրք, քանի որ տարեկան միմիայն 20.000 թուրքով արդէն կարելի է կատարելապէս հեղեղել հաւկական գրավաճառանոցի շուկան: Համաձայնեցէք, որ երեխայական գրքերը 10 և 20 կոպէկանոց և 50—100 երեսանոց, ամեն տեսակ վարձատրութիւններով հանդերձ հեղինակներին կամ թարգմանիչներին, կարող են նստել 100—150—200 թուրքի ամենաշատը, արդէս որ 20.000 թուրքիով կարող են հրատարակել ամենապակասը 100՝ 20 կոպէկանոց, կամ 50՝ 40 կոպէկանոց, կամ 25՝ 80 կոպէկանոց և մի թուրքիանոց գրքեր: Ինչ կասկած, որ ամենքը բաւական կը լինին, եթէ Ընկերութիւնը կարողանալ մօտ ապագայում հրատարակել տարեկան արդ քանակութեամբ գրքեր:

Այդ շրջանակների մէջ գործելը և մասնաւորութիւնների մէջ ընտրութիւն անելը արդէն թողած պէտք է լինի Ընկերութեան խմբագրական ժողովի հաւեցողութեան:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՑՁԱԿԱՆ ՓՈԽԱՏՈՒԽՆԱԾՈՂԱԿԱՆ

ԳԱՆՁԱՐԱՆԻ:

Մեզ լատնի չէ, թէ որ թւականից հաւկական դպրոցներից մի քանիսում մուտք է գործել ուսուցչական փոխատու-իւնադական Գանձարանի գաղափարը և թէ արդեօք որ դպրոցում ամենից առաջ իրադործել է արդ

գաղափարը: Մեզ չափոնի է միայն ալքանը, որ Թիֆլիսի Ներսիսեան և Գալիսեան դպրոցներում ալդ դանձարանները գոյութիւն ունին արդէն բաւականի տարիներից ի վեր: Հաւանականաբար, Ներսիսեան դպրոցում առաջին անգամն է հիմնաւորուողական փոխառութեան խնայողական Գանձարանը:

Քէ հրքան օգտակար և անհրաժեշտ հիմնարկութիւն է վիշաժ գանձարանը, ալդ ցոյց է տալիս ալն հանգամանքը, որ վիշաժ դպրոցներում ալդ գանձարանը, չը նախած ամենաանվաղող հանգամանքներին, շարունակում է գոյութիւն ունենալ և որ շատ բացառիկ է, սակաւ է պատահած, որ ուսուցիչներից մէկը կամ միւսը կամեցած չը լինէր մասնակցել ալդ ընկերութեան:

Բայց ոչ միայն եղածները չեն խախտուել, ալ և միւս հալ դպրոցները աշխատում են տւած օրինակից օգուտ քաղել:

Ասածներէս նորագոյն ապացոյց տալիս է Ալէքսանդրօպօլի հալոց դպրոցը, որտեղ մտադրութիւն կալ հիմնելու ուսուցչական փոխառութեան խնայողական Գանձարան և որի համար խմբադրութեանս մէջ ստացւած է ալդ դպրոցի պ. տեսչից մի խնդիրք՝ ալդ ձեռի գանձարանի կանոնադրութեան հետ ծանօթացնելու:

Մենք առիթից օգուտ ենք քաղում ալդ գանձարանների կազմակերպութեան և կանոնների մասին հրապարակօրէն խօսելու, քաջ գիտենալով, որ ալդալիսի գանձարանի կարօտութիւն ունին ոչ միայն Ալէքսանդրօպօլի, ալ շատ ուրիշ ուսումնարանների ուսուցչական խմբեր, խմբեր, որոնք խնդրին անտեղեակ լինելուց, զրկւում են գանձարանի տւած օգուտներից:

Ի դէպ, Նկատենք միայն անցնելով, որ ընդհանուր փոխառութեան խնայողական գանձարան ուսուցիչների համար—կատարեալ իլլիւզիա է: Վարելի է մի ընկերութիւն հիմնել առհասարակ ուսուցչական և գրող դասակարգին օգնելու, ինչպէս որ ալդ կարելի է անել նաև խեղճ որբերի, ծերացած մշակների համար և ալն. բայց փոխառութեան խնայողական ընկերութիւն առհասարակ հալ ուսուցիչների և գրողների համար—ալդ մի միտք է, որը կարող են առաջարկել ոչ դէպի իրանց և ոչ դէպի ուրիշները պատասխանատուութիւն զգացող հրապարակախօսներ:

Մեր հիմունքները կը չափենք միմիայն ալն ժամանակ, երբ կը համոզենք, որ ալդ խակ միտքը զոհեր է ճարակում միամիտ ընթերցողների մէջ: Մենք առ ալժամ պարտականութիւն ենք համարում միայն զգուշացնելու, որ ալդ մտքի վերալ նախն միայն իբր ժամանակի նշանի վերալ, առանց նորան ժամանակակից խնդրի լրջութիւնը վերագրելու:

Վերադառնանք մեր խնդրին:

Բոլոր ուսումնարաններում, մանաւանդ անտեղ, որտեղ ուսուցչական խումբը կազմւած է շատ, օրինակ, 10, 15, 20 և աւելի ուսուցիչներից, ուսուցիչները կազմում են մի ընկերութիւն՝ մշակւած կանոնադրութեամբ, երկու նպատակով: Առաջին նպատակն է՝ պարտադիր և անսահման խնա-

չողութիւնը, երկրորդ նպատակն է՝ կամաւոր և սահմանափակ փոխառութիւնը: Ինչո՞ւ համար է առաջինը պարտադիր: Որովհետեւ միմիայն դորանով կարելի է ապահով կերպով լուսալ, թէ ուսուցիչը կը խնայի: Իսկ երկրորդ, որովհետեւ ընկերութեան զրամագլուխը, որից պէտք է ուսուցիչները փոխառութիւն անեն, կազմում է միմիայն պարտադիր խնայողութիւններից: Սե ինչո՞ւ է փոխառութիւնը սահմանափակ: Որովհետեւ աւելագէտ դանձարանը կը խախտւի, եթէ ուսուցիչն փոխ տրւի աւելի, քան ուսուցիչը ռոճիկ է ստանում:

Գանձարանի փոխառու ուժը, ուրեմն զրամագլուխը, կազմում է ասացիւնք խնայողութիւնից: Սե ալդ զրամագլուխը աճում է տարեց տարի, որովհետեւ ոչ ոք իր առունք չը պիտի ունենայ իւր խնայածը անվերադառնալի կերպով քետ վերցնել, քանի որ նա ուսուցիչ է ալդ դպրոցում: Սերակապեցէք ձեզ, որ խումը բաղկացած է 10 հոգուց, որոնցից իւրաքանչիւրը խնայում է ըստ իւր ցանկութեան. բայց պարզութեան համար ասենք՝ յոքա խնայում են ամիսը 3-ական ռուբլի: Ալդ հաշուով առաջին տարին կը հաւաքւի խնայած գումար՝ 3 ռ. $\times$ 12 (ամիս) $\times$ 10 (ուսուցիչների թիւ) = 360 ռ.

Երկրորդ տարի 720 ռ.

Երրորդ տարի 1080 ռ.

Չորրորդ տարի 1350 ռ.

Հինգերորդ տարի 1800 ռ. և այլն:

Ալդ նշանակում է, թէ ալդքան խնայեց և ալդքան էլ զրամագլուխ կազմեց փոխառութեան համար:

Խնայողութեան չափը ամենքի համար կարող է նոյնը չը լինել, որպէս և ռոճիկները հաւասար չեն. բայց ով ինչ կամենում է խնայել՝ մի, թէ երկու, թէ հինգ, թէ տասը ռուբլի—նա ալդ չափում է ուսումնական տարւալ սկզբին: Ալդ նորմը տարւալ ընթացքում չի փոփոխում: Հետեւալ տարին նորմը կարող է փոխւել. բայց մի որոշ մի՞նիմում է սահմանում, որից պակաս իջնել չի կարելի: Ալդ մի՞նիմումը, նախած ուսուցիչների ռոճիկներին՝ լինում է մի տեղ մի ռուբլի, միւս տեղ՝ 2—3 ռուբլի:

Կանոն: Անվերադառնալի կերպով ոչ ոք իր առունք չունի իւր խնայողութիւնը քետ վերցնել, թէ չէ՝ էլ ի՞նչ խնայողութիւն:

Այժմ գանք փոխառութեան:

Առաջին և գուցէ երկրորդ տարին փոխառութիւնը չի կարող կատարւել իւր լիութեամբ, որովհետեւ խնայած գումարը դեռ ևս այնքան փոքր է, որ կազմած գումարը բաւականութիւն չի տալ ամենքին փոխ տալու:

Բայց երբ խնայած գումարը կը խոշորանայ, ահա ինչ ձևով է կատարւում փոխառութիւնը:

Բայց նախ սկզբունքը:

Սա մի հիմնական կանոն է, որ ուսուցչի պարտքը պէտք է ապահովացնի նորա ուսճիւղով և ոչ այդ ուսուցչի մասնաւոր կարողութեամբ:

Այբը ստանում է տարեկան ուսճիւղ 500 թուրքի և ունի քաղաքում մի տուն արժողութեամբ 5.000 թուրքու: Գանձարանի համար վերջինս նշանակութիւն չ'ունի, թէկուզ 10—20.000 թուրքու կարողութիւն ունենալ Այբը, բայց գանձարանում նորա ունեցած վարկը (կրեդիտը) երբէք չը պէտք է անցնի 500 թուրքուց՝ ամենաշատը:

Բէնը ոչ մի մասնաւոր հարստութեւն չ'ունի, բայց ստանում է ուսճիւղ 1000 թուրքի: Գանձարանի առջև Բէնը 1000 թուրքու վարկային ընդունակութիւն ունի:

Գլխաւոր սկզբունքը ուրեմն սա է, որ միմիայն ուսճիւղն է ապահովացնում ուսուցչի գանձարանական պարտքը: Բայց արդեօք պէ՞տք է տալ ուսուցչին պարտք իւր ուսճիւղի չափով: Նթէ ընդունէք, որ փոխատուութիւնը չը պէտք է ծառայի դանաղան ափերներին համար, այլ միմիայն ուսուցչին մի փոքր չափով օգնելու համար և ազատելու վաշխառուների ճիրաններից, շուտով կը համոզւէք, որ փոխատուութիւնը պէտք է սահմանափակւի և շատ աւելի փոքր լինի, քան նորա տարեկան ուսճիւղն է: Նախ, մեծ գումար պէտք է ունենալ գանձարանը, որ ամենքին փոխ տալ նոցա ուսճիւղների չափով: Նթէ բոլոր ուսուցիչները միասին ստանում են տարեկան 8000 թուրքի, այդ քանի՛ տարի պէտք է գործէ գանձարանը, որ կազմէ 8000 թուրքի գումար:—Շատ տարիներ: Բայց այդ չէ գլխաւորը: Այբը փոխ ուղեց իւր ուսճիւղի չափով 500 թուրքի, ո՛վ գիտէ ոչ-անհրաժեշտ ծախքերի համար: Մի երկու ամսից քնտոյ նա կարող է կրկին կարօտութեան մէջ ընկնել. բայց որովհետեւ իւր բոլոր վարկը գանձարանում սպառել է, նա ստիպւած պիտի լինի վաճառական մարդկանց դիմել, չաճախ՝ վաշխառուներին: Գանձարանի նպատակներից մէկն է՝ ուսուցչին ազատել ստորութիւնից, որի մէջ նա ընկնում է: Կարօտութեան համար չաճախ դիմելով այս ու այն վաճառականին՝ նա ընկնում է անելանելի դրութեան մէջ, չարաբերութիւններ կցելով վաշխառու մարդկանց հետ:

Հաւանականագոյն կարգը սա է, որ ուսուցիչը իրաւունք ունենալ փոխ վերցնել 1) իւր խնայած գումարը և 2) երկու ամսւան ուսճիւղը:

Այբը ստանում է ամսական 40 թուրքի, և խնայած ունի 60 թուրքի: Նա իրաւունք ունի փոխ վերցնել $60 + 80 = 140$ թուրքի ամենաշատը:

Այդ 140 թուրքին նա պարտաւոր է վերադարձնել ամենաուշը վեց ամսում, մօտաւորապէս հաւասար բաժիններով՝ $20 + 20 + 20 + 20 + 20 + 20 + 20$, որից քնտոյ նա ազատում է պարտքից: Այդպիսով, որպէս տեսնում էք, վերադարձնում է նաև խնայած գումարը:

Պարտքի վերադարձը ապահովելու համար փոխառուի կապրիզներից, գանձարանի գանձապահը ներկայացնում է ուսուսման արանի գանձա-

պահին մի ցուցակ, թէ աչդ ամսում ո՞վ ճրքան է պարտ ընկերութեան դանձարանին: Համեմատ արդ ցուցակի, ուսումնարանի դանձապահը, ուսուցիչներին ուժիկ բաժանելիս, կտրում է ուժիկներից դանձարանի հասանելիքը և արդ կտրած գումարները լանձնում է ընկերութեան դանձարանին:

Մենք ներկայացրինք այն բարձր նորմը, որը, ըստ մեզ, ամենից խելացին է փոխառութիւն անելու համար: Բայց խօսք չը կա, որ ուսուցիչը պէտք է իւր կողմից էլ աշխատէ միշտ չ'օգտուել արդ ամենաբարձր նորմից: Աւելացնենք, սակայն, որ, օրինակ՝ երեք ամիս շարունակ վերադարձնելով իւր պարտքը 20-ական բուբլիներով, ուրեմն արդէն 60 բուբլի, ուսուցիչը, եթէ նորան չէ բաւում 40-ից ալժամ 20 բուբլի դառած ուժիկը, կարող է բացի իւր հին պարտքից, որ ալժամ 80 բուբլի է դառել և որից կտրում են 20-ական բուբլի, կարող է, ասում ենք, կրկին 60 բուբլի 6 ամսով փոխ առնել, արդ նոր պարտքի համար ամսական վերադարձնելով դանձարանին 10-ական բուբլի:

Բայց ահա մի խնդիր: Եթէ մի ուսուցչի խնայողութիւնը այնքան շատացաւ, որ խնայած գումարը պիտի ալդ ուսուցչի երկու ամսուայ ուժիկը աւելի մեծ գումար կազմէ, քան նորա վեց ամսուայ ուժիկը, չէ թէ վեց ամսում նա իւր պարտքը չի կարող վճարել:

Այլը խնայած է 400 բուբլի և ստանում է ամսական 60 բուբլի: Ուրեմն իբր թէ իրաւունք ունի վերցնելու 400+120 բ=520 բուբլի: Բայց նորա վեց ամսուայ ուժիկն է ընդամենը 260 բ.: Ի՞նչպէս վարուել:

Ընկերութեան նպատակներից գլխաւորը այն է, որ ուսուցիչը խնայէ: Այդ պատճառով խնայողութեան տեսակէտը պէտք է գերիշխէ փոխառութեան իրաւունքի վերայ: Իսկ է, եթէ ուսուցիչը իւր բոլոր խնայածը լետ վերցնէ և չը կարողանայ վերադարձնել, գորանով մի ուրիշին չի փնտրել, բայց դորանով կը խախտւի ընկերութիւնը: Այդ պատճառով Այբին, արդ ղէպքում, պէտք է տալ առ առաւելն 250 բուբլի մի անգամով և ոչ 520 բուբլի:

Բայց ահա և մի երրորդ կարգի խնդիր: Ուսուցիչների խնայած գումարները տոկոս են բերում, որովհետև փոխառուները տոկոս են վճարում: Մեծ շահ ստանալը չը պէտք է նպատակ դնել, որովհետև արդ տոկոսները վճարում են ընկերակից ուսուցիչները, որոնք փոխառութեան են կարօտ: Ուսուցչական ընկերութիւնը չի կարող և չը պէտք է վաճառականական դիտումներ ունենայ և չը պէտք է ուրախանայ մեծ դիվիդենդներից: Ընկերութիւնը մի տեսակ փոխադարձ վարկի ընկերութիւն է, միմեանց օգնելու ընկերութիւն է: Այդ պատճառով 6 տոկոս շատ բաւական է, իսկ ընդհանուր համաձայնութեամբ պէտք է աշխատել տոկոսը իջեցնել: Տոկոսը վերցնւում է նոյն իսկ գլխից, փոխ տալու ժամանակ: 100 բուբլի փոխ տալու ժամանակ, պէտք է կտրել 6%, ուրեմն 6 ամսուայ համար

բուրլուն 3 կոպէկ, 100 բուրլուն՝ 3 բուրլի և տալ փոխառուին 97 բուրլի, նշանակելով նորա վերապաւարտք 100 բուրլի:

Տոկոսները հաւաքելով տարւալ վերջը կազմում են մի գումար, որից հաշւապահական և այլ մանր ծախսեր դուրս գալով, նաև մի տոկոս լոգուտ ընկերութեան ֆոնդի՝ մնացածը բաժանում են ընկերներին մէջ համապատասխան իւրաքանչիւրի խնայած գումարի մեծութեան:

Յիշենք մի կէտ եւ: Հիմնաւոր փոխառութիւնը, որի մասին խօսք կար վերը, պէտք է զանազանել մանր, առ ձեռն փոխառութիւններից: Գանձապահը իւր մօտ իրաւունք ունի պահել միմիայն 50 կամ 100 բուրլի, նալած թէ ինչպէս է որոշում խումբը, որպէս զի այդ գումարից ցանկացողին փոխ տալ 1, 2, 5 կամ առ առաւելը 10 բուրլի: Այդ առ ձեռն փոխատուութիւնը չի գրւում մեծ մատեանի մէջ, այլ նշանակւում է առանձին և վտ է պահանջւում նոյն ամսաւ ընթացքում: Դոքա անտոկոս են, ընկերութեան ազատ փողերը տրւում են բանկը ընթացիկ հաշով:

Ահա այն հիմնական կանոնները, որոնցով մի ուսուցչական Փոխատու-խնայողական գանձարան պէտք է ղեկավարի: Այդ կանոնները շատ թէ քիչ ամեն տեղ ընդհանուր են. բաց այս կանոնները ներկայացնելիս, մենք աւելի ի նկատի ունէինք Ներսիսեան Դպրոցի Փոխատու-խնայողական ընկերութեան այն կանոնադրութիւնը, որը մշակեց 1883 թականին, բաց որը փտագալ տարիներում խախտեց, շնորհիւ դանազան հանգամանքների, որոնք ընկերութեան օգուտի հետ ոչինչ կապ չ'ունին:

Ընկերութեան կամ Գանձարանի կազմակերպութիւնը այս է: Կանոնադրութիւնը մշակում է ընդհանուր ժողովը, բաղկացած բոլոր մասնակցողներից: Այդ կանոնադրութիւնից մէկը լանձնւում է հոգաբարձութեան, որից խնդրւում է ուսումնարանի գանձապահին պատուիրել, որ ուսուցիչների ուսմաններից կտրի և լանձնի գանձարանի գանձապահին, վերջինիս ամեն ամիս ներկայացրած ցուցակի համեմատ:

Ընդհանուր ժողովը ընտրում է իւր միջից մի գանձապահ, որը պահում է հաշւամատեանները, կատարում է փոխատուութիւնը, նա՝ գլխաւոր անձն է:

Ժողովը ընտրում է, բացի գանձապահից, մէկ կամ երկու հաշւատեսներ, առանց որոնց ստորագիր համաձայնութեան, գանձապահը չ'ունի իրաւունք ոչ ոքի պահանջը կատարելու: Հաշւատեսները չեն ստորագրում ներկայացրած պահանջը միայն այն ժամանակ, երբ պահանջը որոշած նօրմից աւել է:

Հաշւատեսները ամեն ամիս քննում են գանձապահի գրքերը և ստուգում գումարները, նկատում անկանոնութիւնները, լստնում գանձապահին և ընդհանուր ժողովին:

Տարւալ վերջը լինում է ընդհանուր ժողով, որտեղ կարդացւում է ընդհանուր հաշիւը, որոշւում դրութիւնը և բաժանւում դիվիդենդները:

Յիշած պաշտօնական անձերը ընտրուում են ամեն տարի:

Հաշվապահութիւնը պարզ է և կատարուում է համեմատ մի մատեանի՝ որոշ գծերով և բուքրիկներով, որոնց նկարագրութիւնը աւելորդ է տալը, քանի որ մատեանի ձևը կարող են միւս ուսումնարանները ընդօրինակել Ներսիսեան Դպրոցում ընդունւած մատեանից: Այդ մատեանը տպւած է և կարելի է ձեռք բերել:

Ահա, ուրեմն, Ուսուցչական Փոխատու-Խնայողական ընկերութիւնների կանոնադրութեան գլխաւոր հիմունքները և կանոնները: Հիմնեցէք աղպիսի դանձարաններ, ուսուցիչներ հալոց դպրոցների, բայց մի բան երբէք չը մոռանաք: Այն կանոնադրութիւնը, որ դուք կ'ընդունէք ընդհանուր ժողովներում, չարգեցէք. հաղարապատիկ աւելի լաւ կ'անէք, եթէ չափազանցութեան հասցնէք հաւատարմութիւնը դէպի ընդունած կանոնները, քան թէ վարէք հակառակը և ամենօրեայ զանցառութիւններով և արհամարհանքով դէպի կանոնադրութեան այս կամ այն, գուցէ ոչ հաճելի, խտութիւնները՝ կանոնադրութեան ոլժը խախտէք: Դորանով ապահով կերպով սպանած կը լինէք հիմնարկութիւնը ինքը: Կանոնադրութիւնը անփոփոխելի չէ: Եթէ փորձը ցոյց կը տալ, թէ մեր առաջարկած կանոններից մէկը կամ միւսը հարկաւոր է փոխել՝ նպատակին աւելի ծառայած լինելու համար՝ փոխեցէք, բայց ոչ կամաւական կերպով, ալ միմիայն օրինաւոր կերպով կազմած ընդհանուր ժողովում: Փոփոխելի կէտերից զլխաւորը սա կարող է լինել—թէ ուսուցչին փոխ տրի երկու ամսական ուժիկը, թէ գուցէ մի ամսականը կամ երեք ամսականը: Խորհուրդ ենք տալիս, երբ որ կանոնադրութիւնը կ'ընդունւի և գանձարանը կը հիմնւի, կանոնադրութեան մի օրինակը պահ տալ հոգաբարձութեան: Եւ ամեն անգամ, երբ կանոնադրութեան այս կամ այն կէտը ընդհանուր ժողովում կը փոխւի, դորա մասին կրկին գրաւոր կերպով իմաց տալ հոգաբարձութեան:

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Ներկայ համարում ընթերցողները կը կարդան «Ագուլեցոց բարբառը»՝ չափնի գրքի հեղինակ լեղագէտ պ. Սարգիս Սարգսեանցի մի զըրւածքը հիւն և վիւ տառերի գործածութեան մասին: Ոչ ոք կարող է պնդել, թէ դա՝ բուն լեզաբանական խնդիր է, միմիայն լեղագէտներին հետաքրքրական: Դա մի խնդիր է, որը մօտիկից չօշափում է այն կանոնները, որոնցով ղեկավարւում են գրողները և պարբերական մամուլը: Պ. Սարգսեանցի (օղւածը գրւած է «Աղբիւր») ի խմբագրութեան առաջարկութիւնով, բայց տպւում է «Մուրճ»-ում և մենք ուրախութեամբ տեղ ենք տալիս

ալդ չօղւածին, շօշափած խնդրի փամանակակից և հետաքրքրական լինելու պատճառով:

Որպէս զի պ. Սարգսեանցի չօղւածը կարողանար ազդել «Մուրճ»-ի ուղղագրութեան կանոնները վերալ, հարկաւոր էր, որ հեղինակի դատողութիւնը ամբողջապէս ընդունէինք: Բայց ալդ դատողութիւնը իւր թերութիւններն ունի: Ինչի մէջ ենք դտնում ալդ թերութիւնները՝ հարկ ենք համարում իսկոյն ասել:

Թէ պ. Սարգսեանցը, թէ «Աղբիւր»-ը և թէ «Մուրճ»-ը չեն ընդունում վո (ո) տառի գործածութիւնը, որտեղ նոքա չեն արտասանւում: «Մուրճ»-ը ալդ վոյը (ո) պահպանում է միայն ամբողջութեամբ, որտեղ, բառի որ և իցէ փոփոխութեան մէջ, իրան զգացնել է տալիս և կամ երբ արտասանութիւնը ալս և ամբ կերպ թողատորելի է. օրինակ, մենք գրում ենք՝ հեռու-ից, վերարկու-ից, բու-ից և ոչ՝ հեռւ-ից, վերարկւ-ից, բւ-ից. Աստուած և ոչ Աստած, որովհետև սեռականն է՝ Աստուծու կամ Աստուծոյ կամ Աստծոյ կամ Աստծու: Ալդ դէպքերից դուրս, մենք աւելորդ բռն ենք տեսնում վոյ-երի մէջ, որտեղ նոքա չեն արտասանւում: Ի դէպ, նկատենք, որ վոյ-երը ջնջելու համար մենք մեղ դրդւած տեսանք թէ ինքնուրոյնաբար մտածելուց և թէ մի քանի անձերի խորհուրդներից, մանաւանդ մի ճամակից, որ մենք ստացել էինք մեր աշխատակից լեզագէտ ուսանող պ. Լիսիցեանից, 15-ին նոյեմբերի, 1888 թ., որը ջերմագին կերպով ցորդորում էր մեղ հետեւ իւր ուղղագրութեանը՝ ամեն տեղ ջնջել վոյ-երը՝ որպէս փտող աղբալէս սկսեց անել «Աղբիւր»-ը, մասնաւորապէս պ. Աղաբեանը, որի օրինակը աւելի ևս քաջալերեց մեղ հետեւ ալդ ուղղագրութեանը:

Այժմ պ. Սարգսեանցը խնդիրը աւելի առաջ է տանում, դնելով մի նոր հարց՝ ալդ հիւն-ը փոխարինել վեւ-ով և գրել ոչ միայն՝ ասվեց, տրվեց, ալ և՛ լեղվի, Աստված, չօղված, աղնվական և ալն, որ դեռ ևս ոչ ոք չէ փորձել անելու և պաշտպանելու:

Ինչ բանի անունով պ. Սարգսեանցը հիւն-ը փոխարինում է վեւ-ով՝ որոշ դէպքերում:

Նա ալդ անում է մի սկզբունքի և մի հանգամանքի անունով: Սկզբունքն է ալս՝ տառերը տրւած են մեղ հնչիւնները նշանակելու համար: Հանգամանքն է ալս՝ հիւն-ը (ւ) բռնում է ալբերնարանում չունաց օ-ի տեղը և, բացի դորանից, իւր, ուր և ալն խօսքերում, հիւն-ը ձայնաւորի դեր է խաղում: Եզրակացութիւն՝ հիւն-ը (ւ) ձայնաւոր է, իսկ վեւ-ը (վ) բաղաձայն, ուրեմն հիւն չը պէտք է գրել ամբողջութեամբ, որտեղ վեւ-ի (վ) հնչիւն է լսւում:

Եթէ ընդունենք ալդ կանոնը, ուրեմն մենք պէտք է ամեն տեղ, որտեղ վեւ է հնչւած, գրենք վեւ և ոչ հիւն: Ալդ սկզբունքով, պէտք է գրենք՝ հալ, տալսր, ջալ, տերնլ, մինչդեռ պ. Սարգսեանցը ալդ չի անում, ա-

աւարկելով, թէ՛ ալը-ից և եշ-ից լետու հիւն-ը կարդացում է որպէս վեւ և որ ալդ պահպանելով, մենք կ'արտալատենք աւ-ի, իւ-ի երկբարբառ լինելը: Այժ, աւ, իւ կարող էին մի ժամանակ երկբարբառ եղած լինել, երբ հիւնը ենթադրաբար հնչւում էր ոչ վեւ-ի նման. բայց այժմ նոքա երկբարբառներ չեն, այլ վանկեր են, ինչպէս վանկեր են՝ ալ, իւ, իւ վերջապէս ալդ ո՛ր երեխակին ենք հասկացնելու, թէ՛ հիւն գրում ենք վեւ-ի տեղ ալս ինչ դէպքերում՝ ալս ինչ լեզագիրական հնութիւնը փշոզութեան մէջ պահելու համար:

Մենք գտնում ենք, ուրեմն, որ պ. Սարգսեանցը հնչիւնների վերադ հիմնելով հիւն և վեւ տառերի գործածութիւնը, մինչև վերջը հետևողաբար չէ վարւում: Եթէ հետևողաբար վարէր, նորա գրելու եղանակը կ'ուճե՛նար մի հաստատ հիմունք:

Ուրեմն պ. Ս. Սարգսեանցը դեռ ևս ընդունում է, որ, ալս կամ այն պատճառով, վեւ-ի հնչիւնը պէտք է կամ կարելի է արտալատել հիւն-ով:

Եթէ հետևողաբար վարէր նա, պէտք այսպէս դատէր. հիւն-ը ձայնաւոր է և ծառայում էր երկբարբառներ կազմելու համար, այնպէս որ սկզբում («ա») հնչւում էր մօտաւորապէս ինչպէս «առ»), բայց ժամանակով ալդ («առ») սկսեց արտասանել որպէս «ալ»), բայց դորա հետ միասին ուղղագրութիւնը մնաց առաջւանդ, այնպէս որ գրում էին («ա») և արտասանում («ալ»): Դորանից լետու սխալաբար եղրակացրին, թէ հիւն-ը նմանապէս բաղաձայն է և մի երկրորդ տառ է վեւ-ի համար: Բայց որովհետև տառերը տրւած են մեզ հնչիւններ նշանակելու համար, ուստի, քանի որ այժմ ալ ևս («առ») արտասանութիւնը կորել է մեր լեզւում, միտք չ'ունի գրել («առ») (աւ) և արտասանել («ալ»), ալ պէտք է արտասանութեան համեմատ ալսուհետև գրենք «ալ») (կորալ, բերալ): Նոյն կերպ մտածելով, կը գտնենք, որ, փոխանակ գրելու «ուա») (Աստուած) և արտասանելու որպէս («վա»), փոխանակ գրելու «եւ»), իսկ արտասանելու («եվ») պէտք է ուղղակի գրել («վա») (Աստուած) և («եվ») (ձեւ, պարզեւ):

Ալդ ասելուց լետու, քանի որ ամենահամարձակներն անգամ ուզում են հիւն-ը պահպանել վեւ-ի նշանակութեամբ, մի երկու խօսքով լատենք, թէ ինչո՞ւ «Մուրճ»-ի մէջ հիւն-ին գերադասութիւն ենք տւած վեւ-ի առջև:

1) Նախ, որովհետև մեր լեզուի մէջ վեւ-ի հնչիւնը անհամեմատ աւելի լաճախ հիւն-ով է արտալատւում, քան թէ վեւ-ով: Եւ իրօք, վեւ-ի (վ) գործածութիւնը շատ սահմանափակ է: Ալդ տառով գրեթէ միայն սկըսւում են բառերը և դորանից դուրս՝ էլ գրեթէ ոչ մի տեղ գործ չի ածւում, որովհետև հով, ծով, հացով և ալ նման բառերում վեւ-ը (վ) ճարահատեալ ենք գործ ածում, ալսպէս՝ հու, ծու, հացու կ'արտասանէինք: Վեւ-ը գործ ենք ածում նաև ալսպիսի խօսքերում, ինչպէս՝ սովորական: Այստեղ վեւ-ը իսկապէս գործ չ'ունի չինելու, որովհետև առանց վեւ-ի էլ (սո-ո-րա-կան)

վանկի սկզբում, որպէս և բառի սկզբում (տ) տառը արտասանում ենք որպէս «պտ»: Աղառնդ վեւ-ը (վ) դրած է կարծես միմիայն նորա համար, որ վանկերը աւելի շուտ որոշենք. բայց դրած է վեւ և ոչ հիւն, որպէս զի չը կարդանք սուտ-որական: Ուրեմն էլի ճարահատեալ: Որտեղ մենք ստիպւած չենք, թէկուզ (տ)-ի առջև, զնում ենք հիւն, օրինակ՝ լու-ղար-կա-ւտ-րու-թիւն:

Ուրեմն, հաստատ է, որ իբրև կանոն վեւ-ը մեղանում միայն բառի սկզբումն է գործածւում: Բոլոր միւս դէպքերում վեւ-ի հնչիւնը արտապատում ենք հիւնով (ւ):

Արդ, միթէ մեծ վստահութիւն չէ պնդել, թէ վեւ-ի հնչիւնը սկզբնական հաւերէնում միմիայն աղքատ սակաւ դէպքերում է լսւում եղել և որ բոլոր միւս դէպքերում հիւն-ը արտասանւում է եղել որպէս չունաց իպսիլօնը: Աղալիսով հօ մեր նախնական լեզուն լիքը կը լինէր երկրարբատներով և չափազանց քաղցրահնչիւն պիտի եղած լինէր: Կա՞ն արդեօք վկայութիւն: Աղալիսով իբր թէ մենք պէտք է արտասանելիս լինէինք՝ բառ է ունիլ հառ-աւատ առ Աստ-ու-ած:

Մենք հաւանական չենք գտնում, որ, բացի բառերի սկզբում, մեր լեզուի մէջ աղքատ քիչ վեւ-ի հնչիւն եղած լինէր:

Երկրորդ, հալոց լեզւում կա՞ երկու տեսակ ոչ միայն տառեր, այլ և հնչիւններ վեւ-ի համար, մէկը փափուկ, միւսը՝ խիտ: Արտասանեցէք՝ հաւ, բաւական և ալլն, և համեմատեցէք՝ Վարդան, վատ—բառերի առաջին հնչիւնների հետ: Մենք գտնում ենք, որ առաջինները փափուկ են, երկրորդները՝ խիտ: Կով, հով, հացով, բառերի մէջ վեւ-երը հնչւում են նմանապէս փափուկ, բայց վեւ-եր են դրած, որովհետև ալլապէս վեւ-ի հնչիւնը բոլորովին կը կորչէր: Միմիայն բառերի սկզբում վեւ-ի հնչիւնը սղմած է, բոլոր միւս դէպքերում՝ նա փափուկ է: Եւ մենք գտնում ենք, որ աղքատագանութիւնը մօտաւորապէս համապատասխանում է, օրինակ, գերմաներէն Վ և Վ տառերի հնչիւնների զանազանութեանը: Virchow անունի մէջ աղք երկու հնչիւնները կան:

Ուշում ենք ասել՝ հիւն-ը, (ւ) իբրև վեւ-ի հնչիւն, ունի կատարեալ իրաւունք անկախ գոյութեան, որպէս Վ ունի նոյն իրաւունքը, չը նախած որ Վ, իբրև տառ, կրում է մի քանի լեզուներում դուբլ իւ-ի անուն, ալ-սինքն իբրև երկու միատեսակ ձայնաւոր տառերի անուն, որպէս և մեր հիւն-ը՝ երկու դէպքերում խոկապէս ձայնաւոր է: Միթէ անգլիներէնում Վ տառը մի քանի տեսակ հնչիւններ չ'ունի, երբեմն իւ (w), երբեմն լա:

Այդ իսկ հիման վերայ մենք կարծում ենք, որ հիւն-ը, իբր վեւ-ի հնչիւնի փափուկը, պէտք է թույլատրել նաև անկախ միւս ձայնաւորներին, անկախ ա-ից, ե-ից և ալլն: Երրորդ՝ որ աղք թույլատրութիւնը հարկաւորութիւն չը կա՞ն նորից ստանալու: Թէ դրաբարում և թէ աշխարհաբա-

բում հիւն-ը, վեւի մտքով, գործ է ածում վանկերի սկզբում, արհնքն երբ նա չէ կապւած ա-ի, ե-ի, ո-ի հետ: Միթէ այս խօսքերում՝

ձախաւոր,

փաւաւոր

աւան

հիւները կապւած են նախորդ վանկերի արեւի հետ.—Ո՛չ երբէք, Հաւ, ցաւ, բաւ խօսքերի մէջ հիւն-երը կապւած են նոյն արեւի հետ, բայց հաւ-ի, ցաւ-աւ-ի, բաւ-աւան խօսքերի մէջ նորա կապւած չեն:

Այս օրինակներից մենք համոզւում ենք, որ հիւն-ը, ոչ իբրեւ ձախաւոր, այլ իբրեւ բաղաձայն, անկախ գոյութիւն ունի: Մենք այդ ասում ենք, հիմնւելով արտասանութեան վերալ, որը աւելի կարևոր է, քան արհեստական կանոնը, որ և իշխում է ցախօր, այն է՝ թէ արեւից լետ, եթէ վեւ հնչիւն լաւի, պէտք է հիւն դնել: Եւ չեն ուղում լսել, թէ արեւ արեւի հետ վեւ հնչիւնը կապւած է, թէ կապւած չէ:

Եթէ հիւն-ը (ւ) վանկերի առջև կարելի է դնել, երբ նա ուրեմն անկախ հնչիւնի դեր է խաղում, ինչո՞ւ պէտք է սխալ լինի գրել՝ ասւեց, գըրւեց, բացւեց, պատւաւան, և թնչ ուժ ունի դորա դէմ այս հանգամանքը, թէ արեւ հիւն-ով սկսող վանկերի նախընթաց վանկերը չեն վերջանում արեւով, ինի-ով և այլն:

Վերջացնելով մեր խօսքը, պէտք է չափենք, որ այս բացատրութիւնները մենք տւինք ոչ որպէս լեզուագիտութեան խնդիրներում լեզւագէտների հետ վիճելու փառանքութիւն ունեցող, որ երբէք մեր մտքում չի էլ եղել, այլ որպէս «Մուրճ»-ի ուղղագրութեան համար պատասխանատու խմբագիր:

ԿԱՐԳԱՂՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերափառ կաթողիկոսը հետեւալն է կարգադրած հաջ եկեղեցական-ծխական դպրոցների ուսուցչական պերսոնալի մասին, կոնդակով գրած թիմնրի առաջնորդներին, ապրիլի 18-ին, 169 համարով:

«Որպէս երևում է պաշտօնական տեղեկագիրներէից, որ հասած են Մեզ, շատերը հալոց եկեղեցական-ծխական ուսումնարաններից ձեռնհաս չ'եղան մատակարարելու մեր հալաղգի մանուկներին պատշաճաւոր դաստիարակութիւն, թէ ուսման ժամանակի սղութեան պատճառով և թէ ուսուցիչներից և ուսուցչուհիներից օմանց թերուս և անպատրաստ լինելուն պատճառով, որպէս նոյն իսկ փորձը ցոյց տւեց: Ուստի, կամենալով արդ կողմից բարեկարգել հալոց եկեղեցական-ծխական ուսումնարանները և դիւրացնել մեր առաջնորդներին նոյն ուսումնարանների կառավարելու

գործը, կարգադրեցինք տնօրինել՝ որ Մեր այս Հաշրապետական կոնդակով ներկալ տարւալ սեպտեմբերի 1-ին առ Քեզ՝ մեր եկեղեցական-ծխական ուսումնարաններից արձակած համարւեն ըտլոր ուսուցիչները և ուսուցչուհիները առհասարակ, Նրկրորդ՝ որ Քո կողմից ազդարարւի նրանց, որ այն ամենքը, որոնք արտօնութիւններ ունին՝ ստացած Մալր-Աթուռի Հոգևոր ձեմարանից կամ մեր հոգևոր դպրոցներից և պետական վարժարաններից և որոնք չօժարեն առաջիկալ սեպտեմբերի 1-ից շարունակել ուսուցչութեան պաշտօնը մեր հոգևոր տեսչութեան ներքոյ, պարտաւոր են անպաղաղ Գերապատութեանդ խնդիր լանձնել Մեր անունով վերոլիշեալ արտօնագիրներով հանդերձ, որ և Գերապատութիւնդ կը ներկայացնի Մեզ անշուշտ մինչ 1-ն լունիսի Քո դիտողութիւններով միասին և կարևոր տեղեկութիւններով Քեզ լատնի եղածներից իւրաքանչիւրի մասին: Որպէս զի ի նկատի առնելով նոցա արտօնագիրները և Քո դիտողութիւնները, Մեզ հնար լինի ընտրել նոցանից ամենից ընդունակներին և մեր եկեղեցական-ծխական ուսումնարանների ուսուցիչների և ուսուցչուհիների ընդհանուր ցուցակ կազմել: Նրրորդ՝ ազդարարւի նաև հոգաբարձուներին՝ չ'ընդունել ուսուցչութեան պաշտօնի մէջ ոչ ոքին՝ ընդհանուր ցուցակից դուրս՝ որ ունինք հաստատելու և իւր ժամանակին ուղարկելու Գերապատութեանդ: Սւ չորրորդ՝ ազդարարես ամենքին, որոնք առաջինը կը կամենան մտնել ուսուցիչների և ուսուցչուհիների շարքը, որ և նոքա վերոլիշեալ կարգով մատուցանեն խնդիր Մեր անունով և սպասեն հաստատութեան Մեր կողմից:»